

ՊԱԹՄԱՆՆԵՐ

ՊՈՒԿԱՐԻԱ

Տարեկան 12 ֆր.  
Վեցամսեայ 6 ֆր.

ԱՐՏԱՍԱՀԱՆ

Երկու քիչ մէկ ծրարով

Տարեկան 14 ֆր.  
Վեցամսեայ 7 ֆր.


ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տօլ.  
Վեցամսեայ 1.50 Տօլ.

ԿԱՆԻՍԻԿ

ԵՄԵՆՈՒԾՄԱՆ ՏՈՂԸ

20 ՄԵՆ.



ԼՐԱԳԻՐ

# ԱՂԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ՀԱՍՑԷ

du Journal

„gavounk“

Varna

Редакция НА

Вестникъ

«Нраву»

Варна

Գրողները եւ չեն տրուիր

## ԽՐԱԳՐԱԿԱՆ ԱՂԳ

Իրաւունք ներկայ տարեշրջանի Բ. վեցամսեակին մէջ (1909 յուլիս 1-է դեկտեմբեր 31) կը հրատարակուի միայն շաբաթ օրերը, եւ այս պատճառաւ առաջին վեցամսեակի բաժնեգրները զեղչած ենք. Պուկարիոյ համար 4 ֆր. եւ արտասահմանի համար 5 ֆր.:

## ՊԱՐՍԿԱՍՏԱՆԸ ԿԸ ՅԵՂԱՇՐՋՈՒԻ

Արեւելքի մէջ 5000 տարիներէի վեր գոյութիւն ունեցող պարսկական միապետութիւնը այս օրեր անագին յեղաշրջում մը կրեց. իր երդումը գրեթէ ժողովուրդին իրաւունքը իր քրմահաճոյքին խաղալիք ընող Մուհամէտ Ալի Շահը վերջապէս պարտուած սահմանադրականներու յամառ յարձակումներէն, գընաց իր զաւակներուն հետ միասին ապաստանեցաւ Թէհրանի Ռուսաց դեսպանատունը:

Սակայն Շահին այս փախուստը չի կրնար զինք ազատել Պարսկաստանի նոր կառավարութեան ձեռքէն. որովհետեւ որչափ որ Շահը այսօր Ռուսիոյ դեսպանատան մէջ Անգլիոյ և Ռուսիոյ պաշտպանութեան տակ կը գտնուի, այդ պաշտպանութիւնը առօրեայ է և միմիայն խուժանական յարձակումները արգիլելու համար է. իսկ եթէ նոր հաստատուելիք օրինաւոր կառավարութիւնը ուզէ դահլիճէն շահը դուրսի ելնել, Անգլիոյ և Ռուսիոյ պաշտպանութեան յայտարարեցին թէ պատրաստ են զանի յանձնելու:

Հետեւաբար ինչպէս կարծիր Սուլթանը Ապտիլ-Համիտ նոյնպէս ալ երգամագրութ Շահը Մուհամէտ Ալի, այսօր անկեալ և դուրս հանար կ'սպասէ իր ճակատագրերին զոր պիտի վճռէ ժողովուրդի ձայնը, այն ժողովուրդի որուն միահնձան տէրը կը կարծէր երէկ ինքզինքն:

Թէհրանը գրաւող Պախլիարներու և ազգայնականներու պետերը Շահը անկարողութեան

մատնելէ անմիջապէս յետոյ ազգային ժողով մը գումարեցին. Այս ժողովին մասնակցեցան յեղափոխական կարեւոր պետերը, բարձր կրօնականներ, պետութեան աւագանին և բռնութեամբ ցրուած Խորհրդարանին երեսփոխանները:

Ժողովը նախ Մուհամէտ Ալի շահը դահլիճէն ընելէ յետոյ նոր վեհապետ հռչակեց իշխան Ահմէտ Միրզան. և պատուիրակութիւն մը կազմուեցաւ որ քնաց Սուլթանապատ դղեակը, յանուն Պարսկ Ազգային ժողովին ողջունելու համար Պարսկաստանի նոր վեհապետը:

Պարսկաստանի այս յեղաշրջումին առթիւ չէ կարելի ուշադրութեան վրիպեցնել ռուս պետութեան ընտան գերբը որ միշտ նպաստաւոր էր Շահին միապետական ձգտումներուն և հակառակ սահմանադրականներուն. Ռուս սպաններն էին որ կը զեկավարէին շահին խաղախները ու թնդանթները, վերջապէս Ատրպատական մտնող ռուսական զօրքերը սպառնալիք մը եղան յեղափոխականներուն սրունք պետերը ստիպուեցան ապաստանիլ Օսմահիւպատոսարանը:

Եթէ Ռուսիա բացարձկ կերպով ու պաշտօնապէս բռնապետութեան կողմն չի բռնեց, պատճառը այն էր որ հարկադրուած էր Անգլիոյ հետ համախորհուրդ շարժելու. Անգլիոյ չի ձգեց որ ազատութիւն շարժումը ռուս զինուորներու ոտքերուն տակ ճգմուի:

Վերջին անգամ Անգլիոյ այս արգելքն էր որ ռուս զօրադուռները չազդիւնէն առաջ չանցան դէպի Թէհրան, ուր Շահը ի զուր սպասեց ռուսական օգնութեան:

Անցեալ շաբթու հեռագիր մը զմեզ մտահոգութեան մատնած էր Թէհրանի Հայոց դէմ կոտորածի մը երկիւղը և այդ պատճառաւ Առաջնորդին հողմէ ռուս դեսպանատան եղած դիմումը հաղորդելով կարծես Հայուն ճակատագրական եղած ընթացքին միշտ քաւութեան նոխազ ըլլալու և ապահովապէս այդ երկիւղը պի-

տի իրականանար, եթէ ազատականներու կողմը պարտութիւն կրէր, որովհետեւ դեռ քիչ օր առաջ շահը ինք յայտներ էր թէ իր դէմ սկսած շարժումը բուն պարսկ ժողովուրդէն չէ, այլ կողակաէն եկած հայ և վրացի խռովարարներու թելադրութեան արդիւնքն է եւ անոնց դեկալարութեամբ առաջ կը մղուի:

Այժմ Շահին փախուստը և սահմանադրականաց յաղթանակը աւետող հեռագիր մը, սա ռուս խառնիթ լուրը կը բերէ մեզ, «Հայերը որ կոտորածներէ կը վախճային, սկսած են ապահովուիլ. քաղաքը հանդարտ է»:

Մաղթենք որ այդ ապահովութիւնը իրական եւ տեւական ըլլաւ ու չմանէր թուրք սահմանադրականներու խոստացած ապահովութեան: Զ. Պուրպր

## «ՀԱՅԵՐՆ»

ԱՏԱՆԱՅԻ ԴԵՊՐԻՆ ՀԵՂԻՆԱԿ ՅՈՅՏ  
ՏԱԼ ԱՍՕԹ Է՝ ՍԵՂԳ Է՝

«Իթիհատ» թուրք թերթը որուն հրատարակիչները Հրեաներ են և որ մինչեւ անցեալ շաբթու կեղեկիւր կոտորածին առթիւ «Թանին» հետ Հայոց միտք կը ծածկէր, շաբաթ օրուան թուով հրատարակած է նէսիմ Ռուսօ էֆէի հետեւեալ յորդուածը:

«Առանայր եւ Հալէպի աղետեալները, աւասիկ Երբ բառ որոնց անունի իմաստը կը գալարէ մեր ջրային գրութիւնը, յուզումով կը համակէ մեր սրտերը, կը խռովէ մեր հոգիները, եւ մեր բոլոր ուղարկութիւնը կը կեղրոնացնէ մէկ կէտի վրայ, եւ մեր էութենէն կը բղրի սա աղաղակը. Տանք, այո՛ տանք... Ստանայր եւ Հալէպի զէպքերը... մեր նորածին Սահմանադրութեան ամենէն արիւնալից, ամենէն ամօթալի եւ ամենէն սգալի զէպքերը... Ազատութեան համար ազգային առաջին պայքարը բացող մեր հայ հայրենակիցները տարիներով պայքար մղելէ եւ աղէտէ աղէտ գլտորելէ ետք երբ սահմանադրութեան օգուտները պիտի վայելէին, քիչ մը շունչ պիտի առնէին անաւասիկ նոր ջարդի մը կ'ենթարկուէին Սահմանադրութեան ատեն:

Օսմ. հեղեղուն միջեւ Թուրքերուն ամենէն աւելի նմանող մեր պաշտօնական լիզոն ամենէն աղէկ խօսող եւ վերջապէս Օսմ. բարբորուն աւ սովորութեանց ամենէն աւելի պատշաճած ցեղն Հայն է. ասիկայ պէտք է խոստովանիլ:

Յեղային միութեան համար ամենէն աւելի գոհարութեան ենթարկուած մեր սա միջոցին, եթէ մեզմէ պաղեցնենք եւ զանոնք գաղթելու ստիպելու ատիժան անաւոր զէպքի մը տեղի տանք ու հեռացնենք մեր Հայ հայրենակիցները, որոնք ամէն յատկութիւն ունին միութիւն յառաջ բերելու բացայայտ ընենք որ այլևս պէտք է յոյսերն իսկ չենք Սահմանադրութեան:

Խոստովանենք թէ մեր հայ եղբայրներն եղան որ մեզմէ աւելի յառաջացած եւ բռնապետութեան հետեւանքները մեզմէ աւելի առաջ հասկցած ըլլալով անենէն առաջ իրենք զէնք պարզեցին Բռնապետութեան դէմ, եւ Բեմէի լեռններուն վրայ տակաւին Սահմանադրութեան հզանը չի կարգացուած, շատ տարիներ առաջ արդէն Ազատութեան ձայնն արձագանգէր էր Առաջնորդի ամենէն մութ խորքերուն մէջ: Բռնապետութեան անծեալ կեդրոնին՝ Պուլոյ մէջ, ոչ թէ Սուլթանի Համիտի գահակալութենէն ի վեր, այլ Յաթիի արդարակրօն շրջանէն ետքն ալ մինչ բողոքի ու եւէ ձայն չէր բարձրացած, մեր Հայ հայրենակիցներն եղան որ առաջին զօհները առաջ բարձրացուցին առաջին աղաղակը, ու եթէ ուրիշ ցեղեր այս աղաղակին ճշմարիտ մասուն հասկնալով Հայերուն այս շարժումը մարելու համար ոչ թէ Սուլթանի համիտի օգնէին, այլ ընդհակառակն Հայերուն օժանդակէին, տարակոյս չկայ որ 15 տարի առաջ կրնայինք օգտուել Ազատութեան բարիքէն:

«Հայերուն այս պայքարն իբր անկախութեան պայքար ցոյց տուող Ապտիլ Համիտի վրնակին հաւատ ընծայեցինք մենք ու կոտորեցինք մեր հայ հայրենակիցները: Գետոյ նոյնիսկ չվարանեցանք իբր օժանդակելու նայելու մեր այս հայ եղբայրներուն վրայ, որոնք ազատութիւն ձեռք բերելու համար այնքան մեծ ծառայութիւններ մատուցել էին:

Ամէն տեսակէտով գովելի է էտիրոնէի յարգելի երեսփոխանը (Տոգորիզա Թէվֆիկ պէյ) որ Երեւոյ, Ժողովոյ բարձր բեմէն պոռաց թէ «Հայը, ընկալած ինչէն չեն կրնար ըլլար» Այո՛, 15 տարի առաջ Ազատութեան սիրոյն զօհեր տուող Ազ-



\_\_\_\_\_



## ՎԵՅ. ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԱՆԻԻ ՄԵՋ

Անի, 23 յունիսի

Հինգշաբթի, յունիսի 25-ին, առաւօտեան ժամը 7-ին, Վեհափառը իր չքաւորով կառքերով գուրս եկաւ Ալէքսանդրոպոլից Անի գնալու հաւատարմութիւնը:

Շքաւորքի անդամներն էին Գարեգին արքեպիսկոպոս Ս. Թո. Կեան, Այոս հայկոպոս Ծախան Գրեգորիս վրդ. Պալաքեան, Մեսրոպ վրդ. Նշանեան, Լ. Գրեգ. Սուրբաբեան, Բարդէս վրդ. Աղաւեան, Մեսրոպ վրդ. Տէր. Մովսէսեան, Խորէն վրդ. Մուրադեան, Մանաս-Չէրապ, Թիֆլիզի կարդադիր մասնաժողովի անդամներ Սաթ. Ծախանեան, Ի. Ծախանեան, Ս. Եսայեան տիկնայք Երանուհի Թ. Բուրձումեան, Հ. Աւթանթիւեան: Միացել էին եւ «Արարիկ» թերթի աշխատակիցն ու տիկին Արաքեան:

Վեհափառը քառաձի կառքով, շրջապատւած հեծեալ պահակներով, շրջապատուած առաջնորդութեամբ գնում էր Կանգարաւոր գնացքի առջեւ:

Պէտք էր նայել թէ ինչպէս գնան. զանկողներէն վազում էին շնչասպառ կերպով թէ այդ եւ թէ կին երախաներով Վեհ. ինչեւեւ տեղը, տեսնելու իրանց սիրելի Մարդուն եւ առնելու նրա օրհնութիւնը: Հայ շինականի այս տեսակ ոգեւորութիւնը միտ տը պատրուկութիւն էր թողնում Վեհափառի վրայ:

Անիին մօտիկ, զեռ հեռում, պարսպներէ մօտ, երեւում էր տաղանքազուրկ եւ յիւսիս երբ մօտեցանք, տեսանք մի այնպիսի հոծ ժողովուրդ, որպիսին երբեք չէ եղել Անիում, աւերակներու այդ աշխարհում: Պարսպի առաջ զրուած էր տեղան, որի շուրջը թուրքներն էին յարգելի պրոֆեսոր Մարտի պեղումներէ վրայ աշխատող մշակները իրանց բաներով, պրոֆեսորի ձեռքի տակ աշխատող ուսանողները եւ եկուորահազար բազմութիւն: Երկու պարսպները միացված էին մեծ տախտակով, որի վրայ խաչը կարմիր տառերով գրուած էր «Աստի Գալուստ»:

Վեհն իջաւ կառքից եւ մօտեցաւ տեղանին: Այն պահին առաջացաւ պրոֆեսոր Մարտի եւ զրաբար արտասանեց մի ողջունի ճառ: Պրոֆեսորի ճառն այն աստիճան հիասթափեց, ոգեւորիչ եւ զգացմունքներով լի էր, որ Վեհափառը, ինչպէս եւ շատերն անկարող եղան զսպել իրանց արտասուքը:

Նորին Վեհափառութիւնը պրոֆեսորին պատասխանեց այսպէս. «Այո՛ յարգելի պրոֆեսոր, այս աւերակները որ լուռ կանգնած են այս տեղը, կը յիշեցնեն հայուն իր անցեալը. անցեալ փառաւոր, անցեալ երջանիկ... Կը յիշեցնեն այն ժամանակները, երբ հայ կեանքը եւս կը պայծառանար յաղթ եւ հոյակապ:

«Դուք յարգարժան բրոֆեսոր, որ ձեր ամբողջ եռանդը եւ սէրը նուիրած էք այս աւերակներուն, ձեր պեղումներով հսկայական ծառայութիւն կը մատուցանէք գիտութեան: Դուք ձեր պեղումներով ի լուր աշխարհի կը յայտնէք մի ժողովրդի տարազներ, անցեալ պանծալի կեանքի պատկերը ամբողջովին: Եւ այդ կուտաք հայ ազգին իր նախնիներուն վստահանալը...»

«Այս ամբողջ կեանքիս մէջ կը բաղդալի տեսնել այս աւերակները եւ

տեսայ. ու այս րոպէին եւրախ եմ: Շարունակեցէք ձեր բազմադէպ եւ բեզմաւոր աշխատանքը, ազնիւ Մարտ»:

Վեհն այս ճառը նոյնպէս մեծ ապաւորութիւն թողնեց թէ պրոֆեսորի եւ թէ միւս լսողների վրայ:

Ապա լուսանկարվելուց յետոյ, մըտանք Անիի ներսը: Ինչ խոհեր ինչ պիտի զգացմունքներ էին պատել իզմիրեանին, եւ ճիշտ չէմ կարող ասել. միայն նրա թոխածալի, վշտահար դէմքը: Խոհաւ աչքերով վկայ էր նրա ներքին աշխարհի ալեկոծութեանը յուզմունքին...

Հանգստանալուց յետոյ Վեհափառը ցանկութիւն յայտնեց չըջել աւերակները եւ տեսնել հնութիւնները:

Ամենից առաջ նա առաջնորդվեց իր չքաւորով հնադարանք, յետոյ թանգարանը այս տեղ երկար եւ սիրալիր բացատրութիւններ էր տալիս պրոֆ. Մարտ:

Այնուհետեւ Վեհափառը այցելեց եւ գրեց Ս. Գրիգոր Լուսաւորչի եկեղեցին, մայր տաճարը, Գագկաշէն Ս. Գրիգորի եկեղեցին, իշխանաց տունը, վրաց եկեղեցին, 4 սրահազարդ փոքրիկ շէնքեր, պալատը, երկու հիւրանոցները, Առաքելոց եկեղեցին եւ այլն:

Այս լուր տեղեւորումն ալ մաշակաւոր անբացատրութիւններ տալին պրոֆեսոր Մարտ եւ ճարտարագետ Թ. Թորմանեան, ոյ Վեհը ճաշից յետոյ խօսակցեց մի ժամվայ չափ հայկական ճարտարագետութեան վերաբերեալ խնդիրներու մասին:

Ամէն անգամին մի որեւէ հնութիւն տեսնելիս, Նորին Սրբութիւնը յայտնում էր իր իմաստալի կարծիքները, եւ դրանք այնքան հիմնական, այնքան խելացի, որ անմիջապէս պէտք էր համաձայնել:

Նորին Սրբութիւնը Գագկաշէն Ա. ի արձանի մօտ լուսանկարվեց, որը եւ յարգելի պրոֆեսորը պատրաստեց միւս առաւօտան:

Երկրային պեղումները կատարվում են Առաքելոց եկեղեցում, ուր յոյս կայ նոր յայտնաբերութիւններ երեւան հանելու:

Ամբողջ մի ժամ Վեհը ընդունեց այդ օրը աչք տեղ գտնվող մարդկանց եւ պէտք էր տեսնել թէ ինչպէս հայ գեղջուկը տկնածութեամբ մօտենում էր իր հոգեւոր պետին եւ, նախքան համբուրելը նրա աչքը, ծունր էր դնում եւ երկրպագում էր նրան:

Հետեւեալ օրը յունիսի 26-ին, առաւօտեան մեղ մօտ եկան Ա. Արաւիան եւ Ասրպետ:

Վեհափառը այդ օրը դարձեալ չըջեց մէկ երկու տեղ եւ լուսանկարվեց մայր տաճարի առաջ իր չքաւորի հետ միասին:

Թէեւ նախաձեռնեց յետոյ, ցերեկվայ ժամը ուղիղ 12-ին ճանապարհ ընկանք գէպի Ռոշալանք, Վեհը չընդհատեալ իր յայտնեց պրոֆ. Մարտին, Թ. Թորմանեանին եւ միւսներին եւ աչքերով հետեւեալ ճանապարհը:

Ժամը 2-ի մօտեցը հասանք Դոշավաճ, ուր Վեհափառը զննեց այն տեղի հնութիւնները. միտամ հանգստանալուց յետոյ ուղեւորվեցինք դէպի Ալէքսանդրոպոլ:

Քաղ. Մշակ



## ՎԵՐԱՅԻՆ

Ազգ. Երեսփ. Ժողովոյ վերջին որոշմամբ Երուսաղէմայ ծանօթ խնդիրը նոր ձև մը ստացաւ: Վարչութիւնը ամբաստանած ըլլալով Յարութիւն Պատրիարքը թէ պառամած եւ թէ դաւաճանող ազգային շահերը, առաջարկած էր Ազգ. Երեսփ. Ժողովին, զանի պաշտօնական ընելով, պատրիարքական Տեղապահ մը ընտրել եւ կազմել քննիչ յանձնաժողով մը որ քննէ վարչութեան բերած ամբաստանութիւնները: Ժողովը յետ երկար վիճաբանութեան ընտրեց 10 անդամէ բաղկացեալ յանձնաժողով մը: Յարութիւն Պատրիարքի դաւաճանութիւնը անով կը բացատրուի որ, նախարարութեան հեռագրած եւ Ազգ. Վարչութեան իրաւունքը Վանքին գործերուն միջամտելու մերժած է:

Ցաւալի է որ Վարչութիւնը ընդունելով հանդերձ Յարութիւն պատրիարքին զառամած ու ցընդած վիճակը, եւ հաշուետոյս կարգ մը միաբաններու ձեռք գործիք դարձած լինելը, անոր դաւաճանութիւն կը վերագրէ: Այս ապերախութիւն է 60-70 տարի ազգին ծառայած եկեղեցականի մը հանդէպ: Պոլսոյ վարչութիւնը պէտք էր բաւականանար զանի պաշտօնէ դադարեցնելով իբր զառամեալ ու Տեղապահ մը ընտրել տար Ազգ. Ժողովին:

—Տ. Հինդլեան Ազգ. Ժողովին հետեւեալ 3 առաջարկները ներկայացուց:

Ա. Հայոց գաղթականութեան մասին ինչ կը խորհի վարչութիւնը եւ ինչ տեղեկութիւն ունի:

Բ. Ատանայի խնդրոյն մասին եղած դիմումներուն նկատմամբ տեղեկութիւն հաղորդել:

Գ. Օսմ. խորհրդարանի մատուցուելիք յիշատակագիրը ներկատողութեան առնել ժողովին:

Վարչութիւնը խնդրեց Ժողովէն որ այդ մասերուն ո'ւ է հարցում չըլլայ որովհետեւ իր կատարած դիմումներն եւ խնդիրները տակաւին վերջնական արդիւնքի մը չեն յանգած: Գեղամ էֆ. Օսմ. Երեսփոխան ալ ըլլալով առաջարկեց առաջնութեան մատուցանելի յիշատակագիրն. բայց Ծահրիկեան յանուն վարչութեան պատասխանեց որ այս հարստահարութեան հարցն Երեսփոխանութիւնն յանձնած է Վարչութեան, հետեւապէս պէտք է սպասել պատահութեան:

Ազգին ցաւը եւ անոր դարմանի միջոցները պահել ազգին երեսփոխաններէն մեղ անհասկանալի կը թուի եւ ցաւալի է որ Շահրիկեանի պատահութեան սպասե-

լու պահանջը ընդունուեցաւ Ժողովէն:

Վերջոպէս տարօրինակ խորհրդաւորութիւն մը կը տիրէ Հայ պատրիարքարանին մէջ:

Մեզ կը թուի թէ Բարիդի մէջ Ժէօն-Թիւրքերէն խաբուող խմբակը՝ 30,000 նոր զոհեր տալէ յետոյ՝ այս անգամ ալ ազգը պաշտօնապէս խաբուութեան մը պահ տալ կը միտի կոր:

«Լա Թիւրքի» թերթը գրած էր թէ Հայերուն Աթանթին գաղթումին համար ծրագիր մը կը մշակուի եւ այդ նպատակով Եգիպտոսի եւ Ամերիկայի Հայերը մէկ միլիոն ոսկի տրամադրած են:

Այս լուրի մասին տեղեկութիւն ուղարկեալ Ազգ. Ժողովոյ մէջ Վարչութեան, որ պատասխանեց թէ ոչ պաշտօնական եւ ոչ անպաշտօն ու է տեղեկութիւն չէ առած այդ մասին:

Կիլիկիոյ Տէր Սահակ Ս. Կաթողիկոսը Օսմ. Երեսփ. Ժողովոյ բողոքագիր մը ուղարկեց. որով Հայ Ժողովուրդի դարերէ ի վեր Օսմ. պետութեան մատուցած ծառայութիւնները ու կրած տառապանքը թուելէ յետոյ, Կիլիկիոյ վերջին աղէտին դռնալով, խստիւ կը բողոքէ զինուորական տեսաններուն անիրաւ վճիռներուն դէմ, եւ կառավարկէ Օսմ. հպատակ ամէն ցեղէ մէկ մէկ դատաւոր ընտրելով ատեան մը կազմել աղէտին պատասխանատուները դատելու համար:

Եթէ իր այս արդար բողոքը իրեւութ. Ժողովն ու չի լսէ, իր բողոքը եւ աղեխարշ աղաղակը դէպի երկինք պիտի ուղղէ:

—Ցաւալի է որ տակաւին կը շարունակուի Կիլիկիոյ զանազան քաղաքներուն մէջ զինուորական տեսաններու ողորդութիւնը որով անպատճառ թուրք ոճրագործներուն քովիկը կարգ մըն ալ անմեղ Հայեր դատապարտու վերին հրամանը գործադրել կը միտին: Անբացատրելի է որ մեր Պատրիարքարանը չի կրցաւ տակաւին քանի մը հայ փառաւաններ զրկել, այդ տեսաններու առջեւ պաշտպանելու համար խեղճ Հայերուն նիւթական եւ բարոյական իրաւունքները:

## ԶԵԿՈՅՑ

Ո' եւ է ծանուցում ձրի ջենք հրատարակելու: Ծանուցման պայմանը թերթի ճակատը զրուած ըլլալով, փոխառնել ըստ այնմ զրկելու է կանխիկ: Ազգային եւ բարեգործական հաստատութեանց համար կէս գին վ:

Մեր այն կարգ մը բաժանորդները՝ որոնք անցեալ տարուան պարտքերն են մեզ չեն վճարած, դատարանի պիտի յանձնենք, եթէ մինչեւ օգոստոս 1 չփութան զրկել:

Խմբ. Իրաւունքի



Հ Ա Վ Ա Տ Ի Ս Ա Ք

ԹԻԻՔԻՆ

Շուրս հասկանալի զարգացում մեծ է իսկ մշակութային տեղում հարկերի մեղմումը...

Մեծ թիվով բնակիչներն ապրում են Երևանի մարզում, որտեղ ապրում են հարյուրավոր ընտանիքներ...

Դեպք է զգացվում կրթության շրջանում, երբ ծնողները հարկում են իրենց զոհությունները...

Պուստյակի պոետական սոնետը թերեքիտա միջին շրջանում է...

Եստի՞նք բաժնի գնահատման հիման վրա մեծ ծախսեր են արվում...

Մեծ թիվով բնակիչներն ապրում են Երևանի մարզում, որտեղ ապրում են հարյուրավոր ընտանիքներ...

Մեծ թիվով բնակիչներն ապրում են Երևանի մարզում, որտեղ ապրում են հարյուրավոր ընտանիքներ...

Երևանի քաղաքում շուրս հասկանալի զարգացում մեծ է իսկ մշակութային տեղում հարկերի մեղմումը...

Մեծ թիվով բնակիչներն ապրում են Երևանի մարզում, որտեղ ապրում են հարյուրավոր ընտանիքներ...

Մեծ թիվով բնակիչներն ապրում են Երևանի մարզում, որտեղ ապրում են հարյուրավոր ընտանիքներ...

Մեծ թիվով բնակիչներն ապրում են Երևանի մարզում, որտեղ ապրում են հարյուրավոր ընտանիքներ...

Մեծ թիվով բնակիչներն ապրում են Երևանի մարզում, որտեղ ապրում են հարյուրավոր ընտանիքներ...

ԱՃԻՄԻՍՏԱՆ

Աճեման ինքնակազմակերպություններն են թիվ 1-ի ֆորմի շրջանում...

Երևանի քաղաքում շուրս հասկանալի զարգացում մեծ է իսկ մշակութային տեղում հարկերի մեղմումը...

Մեծ թիվով բնակիչներն ապրում են Երևանի մարզում, որտեղ ապրում են հարյուրավոր ընտանիքներ...

ՄԻԻԹԵՆԵՎԼԻՑԻ

Մեծ թիվով բնակիչներն ապրում են Երևանի մարզում, որտեղ ապրում են հարյուրավոր ընտանիքներ...

Մեծ թիվով բնակիչներն ապրում են Երևանի մարզում, որտեղ ապրում են հարյուրավոր ընտանիքներ...

ՈՒՍՈՒՑԻՉ ԿՈՒՂՈՒԻ

Տոգրեչի Ազգային վարժարանին համար ուսուցիչ մը կ'ուզուի...

ԾԱԽՈՒ ԳԻՐՔԵՐ

«Իր առևտուր»-ի խմբագրատունն է ստանալ հետևյալ գիրքերը...

ԹԻԻՔԻՆ

Table with exchange rates and prices. Columns include item names (e.g., Վաճառ, Արագ) and prices in various units.

Large vertical advertisement for 'ՍՊԱՐՏԱՆԻ ԲՐԱԴՈՒՆՔ' (Spartan Brotherhood) with detailed text and contact information.

ԱԶԱՏ ԵՐԳԱՐԱՆ

Ընտիր և նորագույն երգերու այս հավաքածուն յարմարագույն է նույն շրջանում համար երիտասարդ բարեկամներու ու բարեկամուհիներու և դպրոցականներու...